

Ներկայ աշխատութեանս ընթացքին մէջ շատ անգամներ առիթ ունեցած եմ յիշելու Յովհաննէս Դարդեւ անունով քահանայ մը եւ իր **ժամանակագրութիւնը** : Արդ՝ կուզեմ ծանօթացնել ընթերցողներուս այս կարեւոր անձնաւորութիւնն ու իր երկը, որ Թանկագին եւ վաւերական աղբիւր մըն է Լեւոն Ե-ի պատմութեան համար : Ասիկա գլխաւոր առաջնորդս եղած է ներկայ աշխատութիւնս պատրաստելու ժամանակ :

Յովհաննէս Դարդեւ, Ֆրանսայի ետամպ քաղաքէն, 1377 թուին եւրոպայէն երուսաղէմ գացող ուխտաւորներու հետ միացած կը ճամբորդէր իբրեւ անոնց խոստովանափայր . իրեն կընկերանար ուրիշ կրօնաւոր մըն ալ՝ « եղբայր Անտոն Մոնոպոլցի » : Ուխտաւորներու խումբը Կահիրէ հասած միջոցին երբ իմացաւ որ Հայոց լատին Թագաւորն հոն կը գտնուի, անոր այցելութեան գնաց : Եւ որովհետեւ, ինչպէս կըսէ Դարդեւ, եր. 158, « Էր օրն այն տօն սրբուհւոյն Մարգարիտայ », Դարդեւ յատկապէս պատարագ մատոյց արքայական ընտանիքին առջեւ : Պատարագի խորհրդին աւարտումէն ետք Լեւոն խնդրեց Դարդեւէ, որ իր քով մնայ եւ հոգեպէս ու բարոյապէս մխիթարէ զինք : Այս առաջարկն ընդունեց Դարդեւ, պայմանով սակայն՝ որ նախ երուսաղէմ ուխտը կատարէ եւ ապա հրաման ստանայ իր գլխաւորներէն : Լեւոն յանձն առաւ անոր գլխաւորներուն գրել . եւ յաջողեցաւ ձեռք բերել հարկ եղած արտօնութիւնը, որով Դարդեւ իր անբաժան ընկերոջ՝ եղբայր Անտոնի հետ երուսաղէմէ վերադարձին հաստատուեցաւ Կահիրէ, Լեւոնի քով : « Եւ եկաց մնաց անդէն եղբայր Յովհան Դարդեւ ընկերան հանդերձ մինչեւ ցամն հազար երեք հարիւր եօթանասուն եւ ինն եւ գրեաց զամենայն զթուղթսն, զոր առաքէր Թագաւորն յարեմուտս կոյս », ինչպէս կը վկայէ ինք՝ Դարդեւ, եր. 159 : Այս տարւան սեպտ. 11-ին երկու կրօնաւորներն ալ եւրոպա անցան, Հայոց Թագաւորին փրկութեան աշխատելու համար :

Դարդեւ Լեւոնի կողմէ « Հայոց ատենադպիր » կարգուելէ ետք (եր. 183)՝ 1383 ապրիլի 11-ին Կղեմէս է պապէն եպիսկոպոսութեան աստիճան ստացաւ, « ի վարձ փոխարինի վաստակոցն եւ վշտաց եւ բազմաչարչար տուայտանաց, զորս կրեաց նա ի փառս սրբոյ եկեղեցւոյ, ջանահնար եղեալ ազատել զարքայն Հայոց » . (եր. 189) : Այս առիթով Հայոց ատենադպրութեան պաշտօնն յանձնուեցաւ Յովհաննէս Կորսինիի, որ Լեւոնի ընկերացած էր Հռոդոս կղզիէն, ինչպէս պիտի տեսնենք եր. 74 : Նոյն տարւան օգոստ. 14-ին Դարդեւ Սեկովիայի մայր եկեղեցիին մէջ Տորտիպոլիի վիճակին վրայ եպիսկոպոս օծուեցաւ, ի ներկայութեան Հայոց եւ Կաստիլլայի Թագաւորներուն, նավարրայի իշխանին ու անհամար բազմութեան :

Դարդեւ իր **ժամանակագրութիւնը** գրած է Լեւոնի ընկերակցութեամբ եւ խնդրանօք . — « Որոյ (Լեւոնի) վասն ի գիր արկան տոյն այս ժամանակագիրք եւ պատմութիւնք . » (եր. 27) : Դրութեան լեզուն է իր մայրենի բարբառը՝ ֆրանսերէն : Այս գրութեան նպատակն եղած է նախ